

# Փ Ո Ւ Ն Ք

## ՕՐԱԳԵՐ

ՔԻ 82

ԵՐԵՎԱՆԻ

1868 ՅՈՒՆՎԱՐ 2

Ամեն օր կհրատարակի: — Հատր առ այժմ 20 փարայ է: — Մայրաքաղաքի մէջ բաժանորդ ըլլալ ուղղը՝ 40 դրշ. պիտի վճարէ 100 թուոց համար. իսկ դաւառաց մէջ 45 դրշ. գարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով: — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար: — Լրագրի վերաբերեալ նամակ և ուրիշ որևէ գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի կոստանդնուպօլիս Մահմուտ փաշա Գաշուգճի եան վերի յարիը թիւ 9:

### ԱՂԳԱՅԻՆ

Մասիսի շարթ աւուր թերթէն կիմանալք թէ՛ Լըմիաճնի Ա. Հայրապետը նախորդ ամսոյն 5 ին մեկներ է Բեդերսպուրկէն Մոսկուա և անկէջ Բիշնէվ երթալու համար, ուր մեծ պատրաստութիւններ եղեր են՝ Կորին Սրբազնութիւնն արժանապէս ընդունելու:

Ս. Հայրապետը Բեդերսպուրկի եղած ժամանակ, Տաճկաստանի կրօնական ու ուսումնական հաստատութեանց և Ս. Փրկչեան հիւանդանոցին վոյ տեղւոյն ազդայնոց համակրութիւնը հրաւիրելով, անմիջապէս 1000 քառապոնէն աւելի նուիրատուութիւն եղեր է, որով Կորին Սրբազնութիւնը քանի մը եկեղեցական զգեստներ շինել տուեր է Պրուսայի հրկիզեալ եկեղեցւոյն համար, և 16 հատ ալ ուսուսական վիճակաւոր արժեւորմն գներ է, որք իրենց տարեկան շահէն դատ՝ ամէն մէկը 80 000 էն 200,000 քառապոն կըրնան վասարկիլ՝ եթէ բազբը նպաստէ: Եւս արժեւորմներուն ալ 8 հատը Ս. Փրկչեան հիւանդանոցին և 8 հատն ալ Ունիոյ վարժատանց նուիրեր է Ա. Հայրապետը:

Երեկուան Մանգուլէն «Շ նորհաւոր նոր տարի» վերնադրով յօղուածով մը

լցուած, և յօղուածին կէսն ալ աղբային Հիւանդանոցի վոյ էր:

Մանգուլէի խմբագիրն, իւր յանձնաւորած մատակարարութեան դէմ շատ նախանձորդներ, թշնամիներ և զրպարտիչներ երեւակայելով, Մէճմուան, Փունջն ու Ալիկիան անոնց դործիք եղած կհաւմարի, և կըսէ թէ՛ «խել մը նախատիրներ կընեն և երբէք անործադրելի պառաւհան խրատներ կուտան»: Մեր պաշտօնակիցն այսչափով ալ դո՛հ չըլլալով, կյաւելու թէ՛ «մեր աղէկ գիտնալով այս երեք լրագրաց խմբագիրներուն ինչ գաղափարի և ինչ սրտի ծառայելնին, երբէք չեմք զարմանար. բայց չեմք մոռնար ըսելու թէ այս տարիներս նորածնութիւն (մօտա) մ'եղած է կեղծ ազգասիրութիւն մարդ խաբելն»:

Փունջը չուզելով անպատասխանի թողուլ Մանգուլէի այս երեւակայական զբոյցներն, իր մասին կպատասխանէ թէ՛ ինքն երբէք Հիւանդանոցի մատակարարութեան դէմ նախանձորդ թշնամի և զրպարտիչ մէկը չձանչնար, և երբէք չնդունիր դործիք ըլլալ այնպիսի մէկու մը՝ եթէ դժբաղդաբար գտնուի: Փունջը Հիւանդանոցի մատակարարութեան վոյ վերջին օրերս ինչ ակնարկութիւն օր բրաւ, ուրիշ նպատակաւ չէր՝ բայց եթէ ազբա-

տին աւելի հանգստեան և աւելի բարեկե-  
ցութեան համար : Հետևաբար՝ համբ-  
րութեամբ տարաւ այս առթիւ իրեն եղած  
նախատանսց և մարդու պէս խօսիլ չը-  
գիտցող մէկ երկու անպիտաններու կող-  
մանէ իրեն դէմ եղած անվայել յար-  
ձակմանց :

Մանգուձէի խմբագիրը թող զիտնայ  
թէ՝ փունջը երբէք իբրև ազգասէր չպար-  
ծիր, այլ կ'ընդունէր որ իւր գործը խօսի և  
ո՛չ ընքը : Սակայն կզարմանամք որ Ման-  
գուձէ մարդոց սիրան ալ բննելու աստ-  
ուածային յատկութիւնն ունենալով գի-  
տէ եղեր թէ մեր ըրածը կեղծ ազգասի-  
բութեամբ մարդ խարել է : Եյս քանի՜  
յատկութեամբ զարգարուած է Մանգու-  
ձէի խմբագիրը մարդ է, թէ ուրիշ է-  
ակ մը : Այնքան ազգասիրութիւն, ազ-  
քասիրութիւն, հայրենասիրութիւն,  
անձնուիրութիւն, մէկ խօսքով ամեն զիւ-  
ցազնական բարեմասնութիւններ գացիր  
հանգչեր են Մանգուձէի մէջ. խմբագրին  
վրայ, և ուրիշ խմբագիրներ զօրկ ու-  
թափուր մնացեր են :

Չմտնածք նշանակելու թէ Մանգու-  
ձէ զմեզ Եւրոպեան ալ անուանած է,  
Եյս անուանակողութեանը վրայ ծիծաղելէ  
զատ պատասխան չունիմք : Եւրոպիո ըն-  
թերցողաց շատերն արդէն կրնան ի խզձէ  
վկայել թէ հայրագրաց մէջ աւելի շար-  
լաթանք ո՛վ է : Մինչև անգամ շատերը  
շարլաթան ըսելով Մանգուձէն կիմանան,  
և եթէ քիչ մ'ալ այսպէս երթայ՝ Ման-  
գուձէ անունը վերնալով Եւրոպեան ա-  
նունը պիտի յաջորդէ :

Վերջապէս կցաւիք որ մեր Մանգու-  
ձէն այս տարի ալ այսպէս կ'սկսի և տա-  
կաւին ամբարտաւանութիւնն ու պարծնն-  
կոտորութիւնը մէկզի ձգելով՝ մարդու և  
ըրգրապետ մարդու պէս խօսելու հետա-  
ուտ չգտնուիր :

Ո՞վ է որ ազքատին հանգիստը չուզէ :  
Ո՞վ է որ ազքատին օգտին համար աշ-  
խատողն մը դէմ դարան գործէ : Սակայն՝  
Մանգուձէ, միթէ ներելի չէ՞ քու յանձն  
առած պաշտօնիդ վրայ զիտողութիւն ընել  
կամ կարծիք յայտնել : Գունն որ իբրև  
լրագիր իրաւունք ունիս ազգային ամեն  
խնդրոց ու գործոց վրայ զիտողութիւն ու  
կարծիք տալու, միթէ փունջն ալ եթէ ո՛չ  
քեզի չտի դոնէ քիչ մը նոյն իրաւունքը  
չունի՞ : Ինչո՞ւ և կ'արձակիս, ինչո՞ւ կ'վա-  
տաբանես : Հիրքէ՛ Հիւանդանոցի համար  
եղած զիտողութիւնները բայց խմբագիր  
մարդու վայել կերպով :

Երէկուան Մանգուձէի մէջ մեզ ու-  
րախտութիւն պատճառող մաս մը կարգա-  
ցինք :

Փանտոնանի բուն նպատակը՝ Հիւան-  
դանոցը եկամուտներովը խնամուելու վի-  
ճակի մէջ դնելէն զատ, զանի մատով  
ցուցունելու հաստատութիւն մ'ընել է  
եղեր, այնպէս որ մայրաքաղաքս ոտք կո-  
խող եւրոպացին հարկադրի անգամ մը  
նոյն ապստամբարանը տեսնել և հայոց  
վրայ դադափար առնուլ : Եյս նպատա-  
կին հասնելու համար, թողակաւոր հի-  
ւանդաց և յիմարներու յատուկ մէկ մէկ  
մաքուր ու զարգարուն յարկեր պիտի  
պտտրաստէ, և Պէզձնան վարժարանը  
պիտի բանայ ու բարեկարգէ, և անխնամ  
մնացած այլին մարդերով աւաղաններով  
ճառերով ու ճաղկներով զարգարեալ  
հասարակաց պարտէզ մը ընէ և մէկ կողմն  
ալ զեղեցիկ որճարան մը շինել տայ և  
վարձիկոյ գետինն ալ մարտ ամսոյ մէջ  
անպատճառ պիտի սկսել տայ եղեր :  
Ետնցմէ զատ ուրիշ զարտնի նպատակ-  
ներ ալ ունի, բայց զանոնք հիմակուրնէ  
չկրնար զրուցել եղեր :

Մեծ. Փանոսեանի թէ այս ծանուցիլ և թէ պաղտնի — եթէ ազգօրուս են — նպատակաց յաջողութեան համար, ամեն կարգի ազգայինք արդարև պարտաւոր են յամենայն սրտէ յաջողութիւն բարեմաղթել, և իւրաքանչիւր իրենց ձեռնհասութեան համեմատ օգնութիւն մատուցանել: Անտարակցոս եւք որ Փանոսեանի յայտնած նպատակները՝ եթէ յաջողին, արդարև քիչ օգուտ չեն բերեր Ազգիս: Մենք մեր կողմանէ մեր սիրելի ազգայնոց հրաւեր կկարգաւոր որ փութեան օգնել Փանոսեանի: Իսկ Փանոսեանէն եթէ կընթուռնի, կինդրեմք որ եթէ իւր առաջադրութեանց վրայ թէ՛ հրապարակական և թէ՛ մասնաւոր իրտողութիւններ լսէ, պատուաւոր կերպիւ ունկնդրութիւն ընէ և պատասխանէ, հետի կենալով զիտողները նախատելէ, և ուրիշներու համար ալ իւր լրագրին մջ նախատանաց ասպարէզ չտալով ընդդէմ դիտողի:

Բերեւէ Լուրջ: — Եսկէ երկու ամիս առաջ Պատրիարքարանի Խառն Ժողովին մէջ Աերկիչէն էֆենտին պաշտօնական կերպով ինաց տուաւ թէ Տերութիւնը երեք չորս օրէն Պահմանադրութիւնը ազդին պիտի յանձնէ:

— Կլանք թէ Դեր. Հասունեան հայ կաթօղիկներուն քաղաքական պատրիարքութենէն հրաժարի է և հիմայ Պապին կողմէն լիազօր դեօպան պիտի կարգուի եղեր Բ. Դրան մօտ:

— Երուսաղեմայ վանքին Եղիպտոսի մէջ ունեցած կալուածոց խնդրոյն վրայ Ժողովրդեան կողմէն Պատրիարքարանը տրվելք ազերսապիրը հիմայ 8964 ստորադրութիւն կպարունակէ եղեր. սակայն մինչ որ հին 50 հազար ստորադրութիւն չլլալ չպիտի տրվի եղեր:

Գրանտ: — Անգղիոյ Հպակիսթանի դէմ հանած բանակին մեծ պատրաստութիւնը Աարդէնի սիրտը պղտորի է և կ'երևայ թէ Թուրանի բերնէն պիտի փոխէ:

Իրաւէ: — Դանձուց և պատերազմի պաշտօնեաները ազգային երեսփոխանաց Ժողովին իմաց կուտան թէ մինչև մարտ Հռոմայի վրայ տէրութեան կողմէն ուղակի յարձակում մը չլլայ նե՛ իրենք բանակներուն բարեկարգութեան ու հանդուրժանը պատասխանատու չեն կորչար ըլլալ:

Ռոմիս: — Երևելեան խնդրոյն նկատմամբ Գրանտայի դեղին գերբին մեջէն պատռած էջերը կարկտայու զբաղած է Ժոնիս Դը Օն — Բէրեւոյրի լրագրին միջոցով:

Անգլիս: — Ռուսիոյ կառավարութեան կառավարիկ որ կամ գէթ այսուհետև կիրիտի ձէթը չլլառէ և Գանուրի վրայ ձեռք չկարկառէ կամ Լեհաստանի լիզուն չկտրէ և անոր լեզուին, սիրտին ու հոգիին վրայէն ալ մահու չքերէ:

Բօրնիս: — Այս տէրութիւնը 80 հազար պատրաստ զօրքին 70 հազարը էր աշխարհին հոգեբուն հետ կառուելու զրկեր է:

Հուսիս: — Հեռազիր Անթօնէլիէն առ Աարդէն:

Այս գիշեր քաղաքիս մէջ չթե եղաւ մեծ հայրդ հրաման կընէ որ Թուրանէն նաւատորմից մը հանեա ի Չիլիթա — Ա էքիս:

Պատասխան: — Թող ներէ մեծ հայրըս, տակաւին առջի հանածօ նաւատորմիկն հաշիւը չկրցայ տալ տղայոցս:

կհաստատեն թէ Գաղղիոյ Աբստրիոյ և Ընդդեց կառավարութիւնները Սերպի իշխանութեան խրատ տուեր են խաղաղասիրութենէ չհեռանալ :

Յայտնի է թէ՛ յիշեալ իշխանութիւնը գոհ չըլլալով կայսերական կառավարութեան կողմանէ իրեն եղած շնորհներով, ուրիշ պահանջներ ալ կընէ :

— Գիօրէնցայէն քաջուամ հեռագրէ մը կիմանամք թէ՛ Իտալիոյ երեսփոխանաց ժողովոյն մէջ զօրապետ Մէնայրէտ պաշտօնէից ժողովոյն կազմուած ըլլալն և զանձային ու ներքին գործոց կարգադրութեան հոգ տանելու պէտքը ծանուցանելով, խնդրեր է որ դարձեալ ընդդիմութեամբ արգելք չըլլան մեծ անձնուիրութեամբ ձեռք բերուած գործի մը :

ԾԱՆՈՒՅՄՈՒՆ Բ

Ս. Պօղոս եկեղեցւոյն զանգակահարը Թարգմանեաց կարաղետ Գ. Տաբէեան

Եյս ընտիր թատրերգութիւնը կծախուի Չազմադճըլար փողոցը Պ. Յ. Գալափեանի խանութը, ի դին 11 դըշ :

Իրավաճառ Գ. Գալափեանը երկրորդ անգամ տալիլ տալով Երամեան օրացոյցը հանգերձ յաւելուածովք, դինն ալ 100 էն 60 փարայի իջեցուցած է :

Գալափեանի խանութը հիմայ Չազմադճըլար — Եօզուշու Օլիմպիլիլի — խանի տալիլ 106 թիւ խանութը փոխադրուած է Մահմուտ — փաղայէն :

Պ. Տիգրան Կ. Բամպըքճեան բիանօի մէկ շտեմարան մը բացած է, Պէյօղլու Գրնատուլա փողոց թիւ 24, ուր կըրնան գտնուիլ ամեն տեսակ բիանօներ և արմօնիկներ և անոնց վերաբերեալ ամեն տեսակ նորահասար երաժշտական նօթաներ :

Սկրոյիշեալ ապրանքները, ճիշտ գործարաններէն և հեղինակներէն ուղղակի բերած և իր բնիկ տունը շտեմարանած ըլլալուն համար, ապրանքներուն վրայ ծախք չաւելցունելով միայն քիչ մը գովաստանով ծախելուն տարակոյտ չկայ :

Տեսնել ու ծախու առնել ուղղոյները կհրաւիրուին Պէյօղլու շտապի ճամբան Տիւզիանց տանը դիմացը բիանօյի ատրէսներ կախուած յատկացեալ տեղը և նմանապէս Պօլիս Կուրի — Օսմանիյէյին ետեի դրանը կողմը 24 թիւ խանութը, ուր կընայ գտնուիլ ամեն տեսակ երաժշտական գործիքներ և անոնց վերաբերեալ մանր մունր պիտոյքներ :

Գիները աժան ու ընտիր տեսակներէն ըլլալով, անտարակոյտ շատ գոհ պիտի ըլլան ծախու առնողները :

Օրագիրս ձեռքէ ծախուիլէ զատ, առ այժմ կը անուի նաև Մահմուտ փաշա Գաղղիի խանի բովի գրավաճառին խանութը, Մէրճանը Կարգարեանի և Չոքմաքճըլար — Եօզուշու Օլիմպիլիլի խանի տալիլ 106 թիւ Գալափեանի խանութները • Պահէէ գափու • Եհթիսապի դէմի զբօսարանը • Պէշեկիթաշ ծխափաճառ • Պետրոս աղայի խանութը : Տակաւին ուրիշ տեղեր ալ պիտի օրոշուին :

Թանգարան կիւլիկոյ • Հարր էրրու Երուզաքանիսն հոգեխն • Տեր 1 • Մեծարդոյ Տոքթոր • Մ. Բ. Իւթիլի • Ճեանի աշխատասիրութեամբ այս անունով տետրալ մը հրատարակիլ սկսաւ, որ բոլոր գրավաճառաց խանութները կը ծախուի ի դին 60 փարայ :

ՏՅՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ Հ. Ս. ԱԼԱՄԱՏԵՆ

ԿՈՍՏԱՆԻՆՈՒԴՊՈԼԻՍ ՏԳԱԴՐՈՒԹԻՒՆ Ե. Յ. Ե. ՄԻՆԱՍԵՆ